առաջ է քան զվերջին գաղթականութիւնը. եկեղեցւոյ որմին մէջ զետեղուած և մաշած խաչքարինք կը հաստատեն եկեղեցւոյն բազմադարեան հնութիւնը, թերևս Գենուացւոց ի Կաֆա գալէն եւս շատ առաջ։ Սակայն ոմանք կարող են առարկել, թէ ինչպէս այդ բազմադարեան եկեղեցին, Խփչաղաց և Թաթարաց յարձակմանց միջոց, քանդողաց աչքէն վրիպել է, մինչդեռ իրմէ շատ վերջ շինուած Գենուացւոց Ս. Աղնէս փառաւոր եկեղեցին, որ քիչ հեռի եղած է Ս. Սարգսէ, և այլ շատ ազգային եկեղեցիք քարուքանդ եղել են։

Մեք այդոր պատճառ Ս. Սարգսի խոնարհ անշուք դիրքը կը համարիմք. որ քաղաքին միջավայրն լինելովը հանդերձ, աչքի չի զարներ։ Նորա ցածուն և անշուք դիրքը և չորս կողմի բարձր պատերը, ծածկել են զնա քանդիչ ձեռքերէ։ Արդեօք մեր նախնիք կանխատես զգուշութեամբ չե՞ն տուել Ս. Սարգսի այդ ցածուն դիրքը. ես այնպէս համոզուած եմ, որ հին Հայոց խոհական զգուշութեան արգասիքն է ցարդ Ս. Սարգսի կանգուն մնալը։ Վերջին և զօրաւոր ապացոյց մեր ազգայնոց ի դարու միջոցներ ի Կաֆա գոյութիւն ունենալնուն, կը համարինք մի քար, որ համայնաջինջ ամանակին ժանիքէն պրծեալ, կը պահուի ցարդ Թէոդոսիոյ հնութեանց թանգարանին մէջ։ Քառածալ թերթի ձևով՝ յասպիս քար մի է, վրան երեք խաչեր քանդակուած. միջինը մեծագոյն, որոյ պատուանդանին վերայ կը կարդանք. « Բարեխաւս է սուրբ նշանքս Գրիգորին և իւր զաւակին ». խաչին վերի կողմը կայ քանդակուած այս վաղեմի թուականը ՆՀԶ (1027)։

Վ. Հ. Մինաս Բժշկեան, հաւատարիմ տեղա-